

Դեկտեմբերի 16-ին Բյուրեղավանի երաժշտական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ 2017թ-ի համայնքի բյուջեի նախագծի հանրային քննարկում: Լսումներին մասնակցում էին համայնքի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, շենքերի լիազորներ, համայնքի ակտիվ բնակիչներ: Հանրային լսումներին ներկա էր նաև համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը և <<Համայնքների ֆինանսիստների միավորում>> հասարակական կազմակերպության փորձագետ Դավիթ Մարգարյանը: Հակոբ Բալասյանը ողջունելով ներկաներին և կարևորելով այս քննարկումն առաջարկեց մասնակիցներին՝ լինել ավելի ակտիվ: Բյուրեղավանի համանքապետարանի ֆինանսատնտեսական բաժնի պետ Լիդիա Պողոսյանը հանրությանը ներկայացրեց հաջորդ տարի համայնքի համար նախատեսվող ծախսերը, եկամուտներ՝ 285 մլն, ծախսեր՝ նույնքան: Համայնքը հաջորդ տարի երեք գլխավոր ու հիմնական խնդիր ունի՝ մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների շարունակություն, ասֆալտապատում և օղակածև այգում՝ պուրակի հիմնում: Այս երեք խնդիրը համայնքի ղեկավար Հակով Բալասյանի ուշադրության կենտրոնում է: Քննարկման ընթացքում մասնակիցները հարցեր ուղղեցին քաղաքային գերեզմանատանը ջուր անցկացնելու և ասֆալտապատման աշխատանքների շուրջ: Նրանց հարցերին ի պատասխան՝ քաղաքապետը խոստացավ 2017-ին և դրան հաջորդող տարիներին իրականացնել: Վերջում Դավիթ Մարգարյանը հայտնեց իր կարծիքը.-<<Օրինակելի հանրային քննարկում>>:/p>

17.12.16